Նոյեմբեր ամսվա լրատու

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Ավստրալիայի և Նիդերլանդների փորձագետները Երևանի կենդանաբանական այգում

Սեպտեմբերի 16-22-ը Երևանի կենդանաբանական այգու գլխավոր հատակագծի նախագծման խմբի 3 անդամներ աշխատանքային այցով Երևանում էին: Նրանցից լանդշաֆտային ճարտարապետ Թայս դե Զեուն և սողունների ու ձկների մասնագետ Ուորեն Սփենսերը աշխատում են Ամստերդամի ,Արթիսե թագավորական կենդանաբանական այգում: Ճարտարապետ և հատակագծող Դեյվիդ Հենքոքսը մի քանի գրքերի հեղինակ է և կենդանաբանական այգիների պատվավոր տնօրեն, ով այդ ոլորտում աշխատել է ավելի քան 30 տարի: Նա նաև Մելբուռնում “Դեյվիթ Հենքոքս Դիզայն” գրասենյակի հիմնադիրն է, և ծառայություններ է մատուցել բազմաթիվ կենդանաբանական այգիների ԱՄՆ-ում, Ասիայում և Ավստրալիայում:

Իրենց այցի ընթացքում փորձագետները տարբեր խնդիրներ քննարկեցին: Ուորեն Սփենսերը, ով առաջին անգամ էր կենդանաբանկան այգում, ուսումնասիրեց ակվատեռարիումը և մշակեց գործողությունների պլան, որի օգնությամբ հնարավոր կլինի բարելավել սողունների և ձկների կենսապայմանները այգում: Նա առաջարկություններ արեց սննդի բաղադրության, բազմացման կարգավորումների, ինչպես նաև կենդանիների ցուցադրությունների վերաբերյալ: Պարոն Սփենսերը շատ տպավորված էր կրիաների նոր ազատավանդակով և կրիաների բազմացման մեր հաջողություններով:

Դեյվիդ Հենքոքսը և Թայս դե Զեուն, ովքեր նախկինում մի քանի անգամ այցելել էին Երևանի կենդանաբանական այգի, շատ գոհ էին արձանագրելով, որ այգու գլխավոր հատակագծի նախագծման համար անհրաժեշտ բարեփոխումների մի մասը արդեն օրակարգի մեջ է: Պարոն Հենքոքսը հատկապես ընդգծեց կենդանիների կենսակերպի հարստացման ծրագրում արձանագրած հաջողությունները: Դեյվիդը, ով կենդանիների բարեկեցության և ազատավանդակների ստեղծման ջատագով է, կիսվեց իր տպավորություններով. “Զգալի առաջընթաց է գրանցել այգու ղեկավարությունը բարելավելով մի քանի կենդանիների պայմանները, մասնավորապես արջերինը, որոնք ապրում են իրենց պահանջներին չհամապատասխանող ազատավանդակում: Սա քաջալերում է ինձ շարունակել նույն ոգով: Արջերի շարունակական կարծրատիպային պահվածքը գրեթե ամբողջությամբ վերացել է, և ես վստահ եմ, որ նրանք ավելի բնական վարք կդրսևորեն իրենց նոր, ավելի մեծ տարածքում”:

Կենդանաբանական այգում սկսվել են բորենու նոր ազատավանդակի շինարարական աշխատանքները

Ներկայումս Երևանի կենդանաբանական այգու այցելուների ճանապարհը դեպի Բենգալյան վագրի ազատավանդակ փակված է կապույտ ծածկի միջոցով: Այս ,վարագույրիե ներկայությունը, որը մարդկանց անվտանգության պահպանման համար է, նաև փակում է այցելուների տեսադաշտը և անհնարին դարձնում նրա հետևում կատարվող աշխատանքին ականատես լինելը: Հոկտեմբերի առաջին շաբաթից ի վեր տարածքում գործում է ծանր շինարարական տեխնիկան, որտեղ շուտով կբացվի բորենու նոր ազատավանդակը:

Երևանի կենդանաբանական այգում բնակվում է մեկ պտավոր բորենի, որը մեծ հոչակ է վայելում այգու մեծաքանակ այցելուների շրջանում և ակնհայտորեն վայելում վերջիններիս ուշադրությունը: Բնության մեջ բորենիները բավականին ամաչկոտ են և խուսափում են մարդկանց հետ հանդիպումներից: Տվյալ պահին կենդանաբանական այգում բորենու ոչ բնական պահվածքը պայմանավորված է նրա անբարենպաստ պայմաններով: Կենդանու ճնշող վանդակը մութ է, իսկ հատակը պատված է միայն բետոնով և բորենու համար չի ապահովում այնպիսի պայմաններ, որպեսզի վերջինս ցուցաբերի իր բնական վարքագիծը: Վայրի պայմաններում բորենիները ապրում են խմբերով, որոնցում կենդանիների թիվը երբեմն հասնում է 80-ի: Կենդանաբանական այգու միայնակ բորենին իր ոչ հարմարավետ վանդակում զարգացրել է վարքագծի այնպիսի օրինաչափություններ, որոնք բնորոշ չեն կենդանուն:

Շատ շուտով մեր բորենու դրությունը ամբողջովին կփոխվի: Կենդանին կվայելի իր բացօթյա 690 քառակուսի մետրանոց ազատավանդակը, որը կապահովի իր բնական պահանջներին համապատասխան միջավայր: Ազատավանդակի լանդշաֆտային կառուցվածքը սավաննա կհիշեցնի: Այն կունենա քարքարոտ, ավազի թմբերով, թփերով պատված, և խոտածածկ տարածքներով բնական Աֆրիկյան միջավայր, որը բնորոշ է պտավոր բորենիների ապրելավայրին: Քանի որ պտավոր բորենին սովոր չէ Երևանի ձմեռային ցուրտ պայմաններին, ազատավանդակը կունենա նաև տաքացվող որջ կենդանու համար:

Բորենու նոր ազատավանդակի կառուցումը հնարավոր դարձավ միայն Աստրիդ Քլիֆորդի մասնավոր հանգանակության շնորհիվ, ով մինչև վերջերս Մեծ Բրիտանիա վերադառնալը, մի քանի տարի եղել է Երևանում HSBC բանկի տնօրեն:

Նոր ազատավանդակը հետագայում կդառնա ինչպես պտավոր բորենու, այնպես էլ զոլավոր բորենիների նոր բնակավայրը: Բորենիների այս տեսակը նաև Հայաստանյան էնդեմիկ տեսակ է, սակայն զոլավոր բորենու վերջին գիտական գրանցումը Հայաստանում տեղի է ունեցել 1925 թվականին: Այս տեսակների երկրից ոչնչացման հիմնական պատճառը վերջիններիս համար պիտանի բնակավայրերի ամբողջական վերածումն էր վարելահողերի: Չնայած նրան, որ զոլավոր բորենին կարող է հանդիսանում է հարավ-կովկասյան ցեղատեսակ, այնուամենայնիվ կենդանին վերացել է Հայաստանից և դեռ փոքր քանակությամբ հանդիպում է միայն Իրանում, Ադրբեջանում և Թուրքիայում:

Այսպիսով, զոլավոր բորենիներին Երևանի կենդանաբանական այգում հյուրընկալելով մեկ քայլ ևս կմոտենանք հարավ-կովկասյան ցեղատեսակների վրա կենտրոնանալու և այցելուներին շրջանի հարուստ կենսաբազմազանությանը ծանոթացնելու համընդհանուր նպատակին:

Երևանի կենդանաբանական այգու տնօրենը մասնակցեց EAZA-ի ամենամյա համաժողովին

Երևանի կենդանաբանական այգին վերջերս դարձավ Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) թեկնածու-անդամ, և այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը միացավ իր կոլեգաներին ամբողջ Եվրոպայից՝ մասնակցելու կազմակերպության տարեկան համաժողովին: Սեպտեմբերի 25-ից 29-ը Ավստրիայի Ինսբրուկ քաղաքում տեղի ունեցած հանդիումների ժամանակ 600 պատվիրակներ քննարկեցին, թե ինչպես ժամանակակից կենդանաբանական այգիները կարող են նպաստել կենդանիների բարեկեցության ապահովմանը, հանրային բնապահպանական կրթության տարածմանը և բնության պահպանությանը:

Կոնֆերանսը հյուրընկալել էր Ինսբրուկի Ալպենզու կենդանաբանական այգին, որը հայտնի է իր տարածաշրջանային Ալպյան ֆլորայով և ֆաունայով՝ անթեղված բնական կենսամիջավայրերին հարազատ հսկայական ազատավանդակներում: Այս մոտեցումը էկզոտիկ տեսակների փոխարեն շեշտը դնում է տարածաշրջանին հատուկ կենսատեսակների վրա: Նման քաղաքականություն է որդեգրել նաև Երևանի կենդանաբանական այգու նոր ղեկավարությունը՝ Ռուբեն Խաչատրյանի գլխավորությամբ:

“Ալպենզուի տնօրեն Մատիաս Մարտիսը և ես համագործակցության մի քանի գաղափարներ ենք քննարկել: Մեր երկու այգիները իրար շատ են նման, քանի որ Երևանի կենդանաբանական այգին էլ Ալպենզուի պես մեծ ուշադրություն է դարձնում կենդանիների այն տեսակների վրա, որոնք հանդիպում են լեռնային շրջաններում: Այդպիսի տեսակներից են վայրի այծերը, գառնանգղերը և արծիվները: Իհարկե մենք շատ բան կարող ենք սովորել Ինսբրուկի կենդանաբանական այգուց հատկապես այն պատճառով, որ այն ներկայումս իրականացնում է Գառնանգղերի վերաբնակեցման ծրագիր: Նման մի ծրագիր կիրագործվի նաև Երևանի կենդանաբանական այգում”:

EAZA-ի ամենամյա համաժողովը նաև հնարավորություն է ընձեռում այսպես կոչված TAG-երի (խորհրդատվական խմբեր) միջև փորձի փոխանակման համար: Յուրաքանչյուր TAG մասնագիտացած է որոշակի կենդանատեսակի առումով, ինչպիսիք են արծիվները, արջերը, կատուները և այլն: Երևանի կենդանաբանական այգուն՝ որպես EAZA թեկնածու-անդամ, այժմ հասանելի են TAG-երի ահռելի գիտելիքները, հմտությունները և փորձը, բացի դրանից հնարավոր է գտնել փորձագետների, որոնք իսկապես կարող են խորհուրդ տալ կամ աջակցություն ցուցաբերել:

Ինսբրուկի կոնֆերանսը նաև ապացուցեց, որ եվրոպական այգիները ավելի ու ավելի ակտիվ են բնության պահպանության, տեսակների վերարտադրության և հետազոտութական աշխատանքների որորտներում:

EAZA-ն և Բնության պահպանության միջազգային միությունը (ԲՊՄՄ) այժմ միավորում են EAZA TAG-երը և ԲՊՄՄ Փորձագետերի խմբերը՝ այդպիսով մեծացնելով նրանց դերը վտանգված տեսակների արդյունավետ պաշտպանության գործում ամբողջ աշխարհում:

Ամփոփելով այս զարգացումները՝ Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը նշեց. ,Երևանի կենդանաբանական այգու բարեփոխման գլխավոր աջակիցը Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն է, որը ԲՊՄՄ ակտիվ անդամ է: Եվ այսպիսով, EAZA թեկնածու-անդամ Երևանի կենդանաբանական այգին կարող է օգտվել EAZA կարևոր առավելություններից՝ կենդանիների բարեկեցության և հանրային կրթության ոլորտում և FPWC-Ի միջոցով այն համակցել կենսաբազմազանության պահպանման ոլորտում ԲՊՄՄ փորձառության հետ: Որպես FPWC հիմնադիր տնօրեն ես միշտ էլ բնության պահպանությունը դիտարկել եմ որպես առաջնահերթություն, և իմ ընկալմամբ ժամանակակից կենդանաբանական այգիները պետք է ծառայեն այս նպատակին: Օգտագործելով FPWC-ի կապը ԲՊՄՄ-ի հետ և Երևանի կեդնդանաբանական այգու EAZA թեկնածու-ադամ լինելը՝ մենք բացառիկ հնարավորություն ունենք վերածելու այգին տարածաշրջանային կենտրոնի՝ տեսակների պահպանության, կենդանիների բարեկեցության և հանրային բնապահպանական կրթության համարե:

Զու ամսագիր

Այսուհետ Հայաստանի կենդանական ու բուսական աշխարհը կարելի է բացահայտել նաև մեր նոր ամսագրի շնորհիվ: Հոկտեմբեր ամսից սկսած Երևանի կենդանաբանական այգին հանդես է գալիս նոր նախաձեռնությամբ 2 ամիսը մեկ անգամ լույս տեսնող «Զու» ամսագրով: Ամսագրի առաջին համարը լույս է տեսել Հոկտեմբերի 21-ին և արդեն հասանելի է ընթերցողին: Այն նախատեսված է 6-ից 14 տարեկան բնասեր երեխաների համար: Ամսագրի նպատակն է երեխաների մեջ սերմանել ուշադրություն, սեր, հոգատարություն իրենց շրջապատող աշխարհի նկատմամբ, ուսումնասիրել, ճանաչել և բացահայտել բնությունն ու կենդանական աշխարհը, ուսուցանել խնամք և մաքրություն շրջակա միջավայրի հանդեպ: Ամսագիրն իր փոքրիկ ընթերցողներին պարբերաբար կպատմի այգու բնակիչ կենդանիների մասին, Էկոլոյի արկածների, խնամակալների ու մարդ-կենդանի փոխհարաբերությունների մասին, կառաջարկի բազմաթիվ խաղեր ու մրցույթներ: Բացի այս, ամսագրում կարող եք գտնել նաև այգու էկո-ակումբի սաների ձեռքի աշխատանքները, ընթերցել հեքիաթներ ու զվարճալի պատմություններ, որոնց հեղինակները ևս երեխաներն են: Ամսագրի առաջին համարը ներկայումս վաճառվում է Կենդանաբանական այգու խանութում, իսկ մոտ ապագայում այն կարող եք ձեռք բերել նաև Երևանի կրպակներում: